ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հունիսի 2022թ. N 40-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ, ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2022 թվականի հունիսի 16-ին տրամադրված տեղեկությունները, ինչպես նաև Էդգար Սերյոժայի Էլյազյանի և Մանուկ Աշոտի Մանուկյանի ՀՀ քաղաքաշինության կոմիտե հասցեագրված 2022 թվականի մայիսի 6-ի և մայիսի 7-ի դիմումները՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության դադարեցման մասին

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված թվով 7 քաղաքաշինական սուբյեկտների համապատասխան գործունեությունը, մասնավորապես՝

1) «Ջրային հայելի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 14937 լիցենզիայի N 14937-01 ներդիրը,

2) «Օրիոն 7» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 16855 լիցենզիան և լիցենզիային կից N 16855-01 ներդիրը,

3) «Գորեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 14047 լիցենզիայի N 14047-01 ներդիրը,

4) «Արտ Ստանդարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 17807 լիցենզիան և լիցենզիային կից N 17807-01 ներդիրը,

5) «Ոսմար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 11669 լիցենզիայի N 11669-01 ներդիրը,

6) «Բի Էմ Էս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 17281 լիցենզիան և լիցենզիային կից N 17281-04 ներդիրը,

7) «Փրոֆիս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 16886 լիցենզիան և լիցենզիային կից N 16886-04 ներդիրը:

2. «Օստ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության N 16689-01 ներդիրի կասեցումը համարել վերացված:
3. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտների լիցենզիայի և (կամ) ներդիրի գործողության կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
4. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

   1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

   2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6/28/2022

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ